ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 10.08.2020թ.),

Նոր Գեղիի համայնքապետարանի ներկայացուցիչ

Կ. Հայրապետյանի (լիազորագիր տրված՝ 14.08.2020թ.),

«Ֆրիներջի» ՍՊԸ ներկայացուցիչ

Տ. Չիլինգարյանի (լիազորագիր տրված՝ 14.08.2020թ.),

քննելով Նոր Գեղիի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 07.08.2020թ. ներկայացված (10.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՍՈԼԱՐ ՀՈՄ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքապետարանի կարիքների համար՝ «ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության՝

-2.2 կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է բանկային երաշխիքը:

-2.3 կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ:

-3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.7-րդ կետով, որոշեց կասեցնել գնահատող հանձնաժողովի սույն նիստը և ծանուցել՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին և «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ծանուցումը ուղարկելուց հետո 2-րդ աշխատանքային օրը:

-4.1 կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով:

-4.2 կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կրկին չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին.
4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34:

-5.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետը առաջարկել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

-7.1 կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Այնուհետև, www.gnumner.am համացանցային կայքում 05.08.2020թ. «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն, հետևյալ բովանդակությամբ.

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում ՖՎ կայանների տեղադրման աշխատանքներ

	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “X”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն
1	<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ	X		
2	<<Էկովիլ>> ՍՊԸ		X	գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան
3	<<Ֆրիներջի>> ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել “X”/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/
2	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ		28 765 432 /23 971 193/

	ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ		
1	«Ֆրիներջի» ՍՊԸ	X	26 992 512 /22 493 760/

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի՝

8.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ...Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8.3 կետի համաձայն՝ Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

8.6 կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: ...

8.7 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

8.8 կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս

հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Նախ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունել Կարգի 41-րդ կետը, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին և «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ծանուցել շտկել արձանագրված անհամապատասխանությունները (այն է՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է բանկային երաշխիքը, իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև անճշտություններ են առկա ծավալաթերթի հաշվարկների մեջ):

Այսինքն գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետով, հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ, կասեցրել է նիստը և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին ու «Ֆրիներջի» ՍՊԸ-ին տվել է կատարել համապատասխան շտկում:

Որից հետո, 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով, իսկ 4.2 կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կրկին չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,. 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34:

Բացի այդ նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, նորից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետը, առաջարկել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2.1 կետով արձանագրված անհամապատասխանություններ:

Արդյունքում, www.gnumner.am համացանցային կայքում 05.08.2020թ. «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման

հայտարարություն, որի համաձայն Ընթացակարգով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆրիներջի» ՍՊԸ-ն:

Նման փաստական հանգամանքների պայմաններում ակնհայտ է, որ «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ, մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ և 42-րդ կետերի, Հրավերի 8.2-8.3, 8.6-8.8 կետերով սահմանված դրույթները:

Այսպիսով ունենք իրավիճակ, որում «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

Գնահատող հանձնաժողովը 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 3-րդ կետով արդեն իսկ կիրառել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը և շտկում կատարելու հնարավորություն է տվել և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին, և «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է բանկային երաշխիքը, իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ): Իսկ այնուհետև 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 5.1 կետով գնահատող հանձնաժողովը «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հանդեպ կրկին կիրառել է Կարգի 41-րդ կետը և կրկին շտկում կատարելու հնարավորություն է տրամարդրել նույն «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34): Ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ, այն էլ հայտերի բացման և գնահատման փուլում, ինչը արդեն իսկ կատարվել էր: Ուստի երկրորդ անգամ շտկում պահանջելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը: Ավելին, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկումը չկատարելու արդյունքում պարտավոր էր մերժել ՍՊԸ-ի հայտը:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է ընթացակարգի ողջ տրամաբանությունը, ողջ բնականոն ընթացքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը՝

«Ձեր վարույթում է քննվում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 07.08.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով բողոքը:

Վերը նշված բողոքի վերաբերյալ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն ներկայացնում է հետևյալ լրացուցիչ հիմնավորումները.

«Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ երկու կարևոր փաստ, որն ըստ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի՝ կարող է էական նշանակություն ունենալ սույն բողոքով որոշում կայացնելու համար:

Նախ, առաջին շտկման արդյունքում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում, որտեղ պետք է կատարվեին թվաբանական հաշվարկների շտկումներ, նորից առկա են թվաբանական սխալներ:

Բացի այդ, «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը իրականում շտկվել է ոչ թե երկու, այլ երեք անգամ, փաստացիորեն գնահատող հանձնաժողովի մոտ առկա է «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 4 ծավալաթերթ-նախահաշիվ՝ մեկը ներկայացված հայտով, երեքը՝ տարբեր շտկման տարբերակներով:

Մասնավորապես.

ա) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն կարևորագույն փաստի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջին անգամ շտկումը տվել այն հիմքով, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում առկա է եղել անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ: Եվ փաստացիորեն, առաջին շտկման արդյունքում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում արդեն պետք է վերացված լինեին բոլոր թվաբանական, հաշվարկային անճշտությունները, քանի որ գնահատող հանձնաժողովը, ըստ էության, ներկայացված շտկումը թվաբանական անճշտությունների մասով, համարել է բավարար, և երկրորդ անգամ շտկում է տվել միայն Ծավալաթերթ-նախահաշվի տող 16, տող 34 հանված լինելու և հետ տեղադրելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ծավալաթերթ-նախահաշվում, որտեղ պետք է կատարվեին թվաբանական հաշվարկների շտկումներ, նորից առկա են թվաբանական սխալներ:

Պատվիրատուի կողմից ներկայացված և 2-րդ համարով անվանված թվաբանական սխալները շտկած ծավալաթերթ-նախահաշվում ԿՐԿԻՆ առկա են հետևյալ թվաբանական սխալները.

Ըստ շտկած ծավալաթերթ-նախահաշվի՝ ինքնարժեքը կազմում է 20264,7 ՀՀ դրամ, սակայն իրականում պետք է կազմի 20264,650 ՀՀ դրամ: Շահույթը նշված է 2229,1 ՀՀ դրամ, սակայն իրականում պետք է լինի 2229,117 ՀՀ դրամ: Եթե ընդունենք, որ մասնակիցը կատարել է կլորացում, ապա այս դեպքում էլ սխալ է նշված դրանց թվի հանրագումարը՝ արժեքը: Մասնավորապես, ծավալաթերթում նշված ինքնարժեքը՝ 20264,7 ՀՀ դրամը գումարած ծավալաթերթում նշված շահույթը՝ 2229,1 ՀՀ դրամը, կազմում է 22493,8 ՀՀ դրամ, մինչդեռ ծավալաթերթում արժեքը նշված է ոչ թե է 22493,8, այլ 22493,76 ՀՀ դրամ, ենթադրաբար, որպեսզի արժեքի գումարը համընկնի գնային առաջարկում նշված արժեքի հետ, սակայն այս դեպքում նորից առկա է ակնհայտ թվաբանական սխալ ընդհանուր հաշվարկի մեջ:

Արժեքի սխալ հաշվարկի արդյունքում սխալ է հաշվարկվել նաև ԱԱՀ գումարը, այն նշված է 4498,752, սակայն այն իրականում կազմում է 4498,750 ՀՀ դրամ:

Վերոհիշյալը վկայում է, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից թվաբանական հաշվարկների շտկում կատարած թիվ 2 ծավալաթերթ-նախահաշվում նորից առկա են

թվաբանական սխալներ, ինչը պետք է հիմք հանդիսանար հայտը մերժելու համար: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը պետք է ոչ թե 2-րդ անգամ տար հնարավորություն մասնակցին կատարել նոր շտկում՝ բաց թողնված տողեր ավելացնելու համար, այլ այն հիմքով, որ թվաբանական անճշտությունները հաշվարկի մեջ, այնուամենայնիվ, չեն շտկվել, մերժեր «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը՝ շտկումը թերի կատարելու համար:

Որպեսզի բողոքներ քննող անձի համար ակնհայտ լինի, որ առաջին շտկված փաստաթղթում նորից առկա են եղել հաշվարկի սխալներ, խնդրում ենք ուսումնասիրել 2-րդ շտկում տալուց հետո մասնակցի կողմից ներկայացված և 3-րդ անունը կրող շտկված ծավալաթերթ-նախահաշիվը:

Մասնավորապես, ներկայացված 3-րդ շավալաթերթ-նախահաշվում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից կրկին կատարվել են հաշվարկների ճշգրտում (եթե հաշվարկը ճշիտ է եղել, ապա ինչու է կատարվել կրկնակի թվաբանական ճշգրտում), երկրորդ անգամ շտկած ծավալաթերթ-նախահաշվի ինքնարժեքը կազմել է արդեն 20264,650 ՀՀ դրամ՝ նախկին ծավալաթերթի 20264,7 ՀՀ դրամի փոխարեն: Շահույթը նշվել է 2229,11 ՀՀ դրամ՝ նախորդ 2229,1 փոխարեն: Միայն այդ ուղղման արդյունքում է, որ նոր ճիշտ է ստացվել ընդհանուր արժեքի գումարը՝ 22493,760 ՀՀ դրամը, ինչպես նաև ԱԱՀ գումարը՝ 4498,752 ՀՀ դրամը:

բ) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից իրականում ներկայացվել է ոչ թե երեք ծավալաթերթ-նախահաշիվ՝ մեկը հայտով, իսկ երկուսը շտկված, այլ չորս՝ մեկը հայտով՝ երեքը շտկված:

Մասնավորապես, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի պահանջով գնահատող հանձնաժողովը ներկայացրել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած ծավալաթերթ-նախահաշիվը (կցվում է), իսկ սույն բողոքի քննության ընթացքում Ձեզ ներկայացվել է իբրև թե հայտով ներկայացված միանգամայն այլ ծավալաթերթ-նախահաշիվ, որի ուսումնասիրությունը և իրական փաստերը վկայում են, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ն ներկայացրել է ԵՐԵՔ շտկված ծավալաթերթ-նախահաշիվ:

Մասնավորապես, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի մոտ առկա «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած ծավալաթերթից հետո մասնակցին տրվել է շտկում կատարելու հնարավորություն թվաբանական անճշտությունների մասով: «Ֆրիներջի» ՍՊԸ-ն կատարել է այդ շտկումը և առաջին անգամ շտկված ծավալալթերթը

ներկայացվել է գնահատող հանձնաժողովին (այդ շտկված փաստաթուղթը Ձեզ ներկայացվել է որպես հայտով ներկայացրած ծավալաթերթ): «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն մատնանշել է թվաբանական սխալ այդ ծավալաթերթում, որից հետո «Ֆրիներջի» ՍՊԸ-ն կրկին ներկայացրել է նոր շտկված ծավալաթերթ (որում ըստ սույն լրացման ա) կետի հիմնավորման՝ նորից առկա է եղել թվաբանական սխալ), որից հետո չշտկված թվաբանական սխալը չարձանագրելով՝ գնահատող հանձնաժողովը «Ֆրիներջի» ՍՊԸ-ին տվել է կրկին շտկում կատարելու հնարավորություն՝ այս անգամ բաց թողնված տողերի մասով:

Փաստորեն ստացվում է, որ մասնակիցը միայն երեք անգամ թվաբանական ճշտումներ անելով է կարողացել ներկայացնել ճիշտ հաշվարկ ունեցող ծավալաթերթ-նախահաշվի:

գ) Ներկայացրած բողոքով «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 3-րդ կետով արդեն իսկ կիրառել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը և շտկում կատարելու հնարավորություն է տվել և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին, և «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է բանկային երաշխիքը, իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ): Իսկ այնուհետև 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 5.1 կետով գնահատող հանձնաժողովը «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հանդեպ կրկին կիրառել է Կարգի 41-րդ կետը և կրկին շտկում կատարելու հնարավորություն է տրամարդրել նույն «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34): Ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ, այն էլ հայտերի բացման և գնահատման փուլում, ինչը արդեն իսկ կատարվել էր, այլ էլ 2 աանգամ՝ տես սույն լրացման բ) կետը:

Ուստի կրկին շտկում պահանջելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը: Ավելին, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկումը չկատարելու արդյունքում պարտավոր էր մերժել ՍՊԸ-ի հայտը:

ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով բողոքի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ընդունում է Կարգի 41-րդ կետը կրկնակի կիրառելու մեջ իրենց սխալը, բայց պատճառը եղել է այն, որ սկզբից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նկատել է մի թերությունը (այն է՝ անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ), այնուհետև ծավալաթերթի հաշվարկների մեջ անճշտությունները ճշտելուց հետո նոր միայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նկատել է, որ 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34 և ինչի արդյունքում, կրկին տվել է շտկելու հնարավորությունը, որպեսզի ավելացնի երկու տողը:

Գտնում ենք, որ Պատվիրատուի ներկայացուցչի վերը նշած պնդումը անհիմն է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով ևս մեկ անգամ պնդում ենք, որ գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ, այն էլ հայտերի բացման և գնահատման փուլում, ինչը արդեն իսկ կատարվել էր:

Ուստի երկրորդ /նաև երրորդ/ անգամ շտկում պահանջելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ իրեն վերապահված լիազորությունները:

Ինչ վերաբերում է, Պատվիրատուի ներկայացուցչի այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի նկատել թերությունները դրա համար է կրկին տվել շտկելու հնարավորություն «Ֆրիներջի» ՍՊԸ-ին, ապա գտնում ենք, որ ՀՀ կառավարության որոշման սխալ կիրառումը հիմք է Պատվիրատուի ղեկավարի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այլ ոչ թե կրկին շտկում տալու»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:35-ին և 01.09.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Ֆրիներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

«Ֆրիներջի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 14.08.2020թ. ուղղված միջնորդությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 14.08.2020թ. որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Ֆրիներջի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Սոլար Էներջի Սիսթեմս Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ծածկագրով բողոքը:

Համաձայն բողոքի բողոքաբերը խնդրում է՝

1. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Քանի որ վերոնշյալ բողոքում վիճարկվում է «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը, ներկայացնում ենք մեր դիրքորոշումը:

Գնահատող հանձնաժողովի կողմից 28.07.2020թ.-ին ստացել ենք շտկման ծանուցում՝ առանց արձանագրության: Ծանուցվել է ներկայացնել բանկային երաշխիքները անհամապատասխանությունը:

Ծանուցումից հետո գնահատող հանձնաժողովի քարտուղարը բանավոր՝ զանգի միջոցով, տեղեկացրել է ծավալաթերթում ինչ-ինչ անհամապատասխանությունների մասին, որի արդյունքում մեր կողմից ուղարկվել է մի քանի շտկումներ:

Քանի որ հանձնաժողովի կողմից հստակ չի մատնանշվել անհամապատասխանությունները, դա ընկերությանը գցել է շփոթմունքի մեջ և այդ պատճառով էլ առկա են մի քանի շտկումներ, որի արդյունքում խախտվել են գնումների գործընթացին մասնակցության մեր իրավունքները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է բողոքի քննության առարկա դարձնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ի խախտված իրավունքները:

3. <u>Նոր Գեղի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

Նոր Գեղիի համայնքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2020թ. ժամը 10:35-ին և 01.09.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, և վերջինս հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, քանի որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղղված էլեկտրոնային ծանուցման մեջ մանրամասն չի նշվել, թե ինչ անհամապատասխանություն է առկա վերջինիս ծավալաթերթ-նախահաշվում, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի կրկնակի կիրառումը «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հետևանք է գնահատող հանձնաժողովի գործողությունների, այլ ոչ թե «Ֆրիներջի» ՍՊԸ-ի»:

4<u>. ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Նոր Գեղիի համայնքապետարանը ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ն և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության՝

- 2.3-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ:
- 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և հրավերի 8.7-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին:
- 4.2-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կրկին չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին. 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34:
- 5.1-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:
- 7.1-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:
- 8.1-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 28.07.2020թ. «Ֆրիներջի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման մեջ նշել է, որ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և առաջարկում է մինչև սույն թվականի հուլիսի 29-ը ժամը 13:00-ն ներկայացնել **<u>բանկային երաշխիքի անհամապատասխանությունը:</u>**

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի ներկայացված բողոքը՝ կից նյութերով, ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոքի շրջանակներում Նոր Գեղի համայնքապետարանի կողմից ներկայացված «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով փաստաթղթերը, «Ֆրիներջի» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***<u>իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.</u>***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***<u>պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ</u>***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>***, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին</u>***

ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը:

Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.8-րդ ենթակետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ Նոր Գեղիի համայնքապետարանը ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղիի համայնքում ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Ֆրիներջի» ՍՊԸ-ն և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության՝

- 2.3-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ:
- 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.7-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին:
- 4.2-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կրկին չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին. 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34:
- 5.1-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, առաջարկել է «Ֆրիներջի» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:
- 7.1-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:
- 8.1-րդ կետի համաձայն՝ «Ֆրիներջի» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են գնումների մասին օրենսդրությամբ սահմանված մի շարք դրույթներ, մասնավորապես՝ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 41-րդ և 42-րդ կետերի, Հրավերի 8.2-8.3, 8.6-8.8 կետերով սահմանված դրույթները:

Գնահատող հանձնաժողովը 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 3-րդ կետով արդեն իսկ կիրառել է Կարգի 41-րդ կետի

իրավակարգավորումը և շտկում կատարելու հնարավորություն է տվել և ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին, և «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է բանկային երաշխիքը, իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ): Իսկ այնուհետև 28.07.2020թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության 5.1 կետով գնահատող հանձնաժողովը «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հանդեպ կրկին կիրառել է Կարգի 41-րդ կետը և կրկին շտկում կատարելու հնարավորություն է տրամարդրել նույն «Ֆրիներջի» ՍՊԸ-ին (այն է՝ 4.2.1 Ծավալաթերթ-նախահաշվի տողերը հանված են՝ տող 16, տող 34): Ակնհայտ է, որ գնահատող հանձնաժողովը իրավունք ուներ Կարգի 41-րդ կետը կիրառել միայն մեկ անգամ, այն էլ հայտերի բացման և գնահատման փուլում, ինչը արդեն իսկ կատարվել էր: Ուստի երկրորդ անգամ շտկում պահանջելով՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 41-րդ կետի իրավակարգավորումը: Ավելին, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից շտկումը չկատարելու արդյունքում պարտավոր էր մերժել ՍՊԸ-ի հայտը»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ սույն բողոքի շրջանակներում «Ֆրիներջի» ՍՊԸ-ն, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ներգրավվելով որպես երրորդ կողմ, հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից 28.07.2020թ.-ին ստացել ենք շտկման ծանուցում՝ առանց արձանագրության: Ծանուցվել է ներկայացնել բանկային երաշխիքների անհամապատասխանությունը:

Ծանուցումից հետո գնահատող հանձնաժողովի քարտուղարը բանավոր՝ զանգի միջոցով, տեղեկացրել է ծավալաթերթում ինչ-ինչ անհամապատասխանությունների մասին, որի արդյունքում մեր կողմից ուղարկվել է մի քանի շտկումներ:

Քանի որ հանձնաժողովի կողմից հստակ չի մատնանշվել անհամապատասխանությունները, դա ընկերությանը գցել է շփոթմունքի մեջ և այդ պատճառով էլ առկա են մի քանի շտկումներ, որի արդյունքում խախտվել են գնումների գործընթացին մասնակցության մեր իրավունքները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է բողոքի քննության առարկա դարձնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ի խախտված իրավունքները:

Նոր Գեղի համայնքապետարանն Ընթացակարգի շրջանակներում հրավիրված նիստի ընթացքում հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել տեխնիկական վրիպակ, քանի որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղղված էլեկտրոնային ծանուցման մեջ մանրամասն չի նշվել, թե ինչ անհամապատասխանություն է առկա վերջինիս ծավալաթերթ-նախահաշվում, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի կրկնակի կիրառումը «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հետևանք է գնահատող հանձնաժողովի գործողությունների, այլ ոչ թե «Ֆրիներջի» ՍՊԸ-ի:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.07.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրել է, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ, իսկ նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.7-րդ կետով, որոշել է կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և ծանուցել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին:

Սակայն արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարը, 28.07.2020թ. ծանուցելով «Ֆրիներջի» ՍՊԸ-ին, ծանուցման մեջ միայն նշել է, որ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և առաջարկում է մինչև սույն թվականի հուլիսի 29-ը ժամը 13:00-ն ներկայացնել բանկային երաշխիքի անհամապատասխանությունը:

Մինչդեռ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է</u>***

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումով հստակ սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է***:

Մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ գտնում եմ, որ վերջինիս կողմից թույլ են տրվել Կարգի 41-րդ կետով, Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ 28.07.2020թ. նիստի թիվ 02 արձանագրության 2.3-րդ կետով արձանագրվել է, որ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված շինարարական նյութերի սարքավորումների տեխնիկական բնութագրին, ինչպես նաև կան անճշտություններ ծավալաթերթի հաշվարկների մեջ, սակայն «Ֆրիներջի» ՍՊԸ-ին 28.07.2020թ. ուղղված ծանուցման մեջ չի նշվել, արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ, մասնավորապես՝ ծավալաթերթի հաշվարկների մեջ առկա անճշտությունների վերաբերյալ, միայն նշվել է, որ առկա է բանկային երաշխիքի անհամապատասխանություն, միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ ծանուցմանը կցված չէ որևէ փաստաթուղթ:

Մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի համաձայն, արձանագրելով

անհամապատասխանություններ, «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղղված 28.07.2020թ. ծանուցմամբ տեղեկացներ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված Հրավերի պահանջների նկատմամբ հայտում առկա բոլոր անհամապատասխանությունների վերաբերյալ:

Այսպիսով՝ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և վերջինիս նկատմամբ կիրառել կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը՝ մանրամասն նկարագրելով «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտում Հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա բոլոր անհամապատասխանությունները:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքի պահանջը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից բողոքով, ինչպես նաև ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 բողոքով հրավիրված նիստի ընթացքում հայտնած այն պնդմանը, որ *«Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ծավալաթերթ-նախահաշիվը իրականում շտկվել է ոչ թե երկու, այլ երեք անգամ, փաստացիորեն գնահատող հանձնաժողովի մոտ առկա է «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 4 ծավալաթերթ-նախահաշիվ՝ մեկը ներկայացված հայտով, երեքը՝ տարբեր շտկման տարբերակներով*, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվները քննության առարկա չի դարձնում, քանի որ դրանք հետևանք են Ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների, քանզի 28.07.2020թ. «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ուղղված ծանուցման մեջ չեն նշվել վերջինիս կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, միայն բանավոր կերպով է հայտնվել այդ մասին, որպիսի պայմաններում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի համար այդպես էլ անհասկանալի է եղել, թե կոնկրետ ի՞նչ շտկում պետք է իրականացվի:

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները՝ գտնում եմ, որ Օրենքի խախտմամբ իրականացված գործողությունները,

որի արդյունքում խախտվել է ընթացակարգի բնականոն ընթացքը, չեն կարող լինել իրավաչափ և «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմք հանդիսանալ:

Այսպիսով՝ գնումների ՀՀ օրենսդրությամբ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Վերը նշված հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից 07.08.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, այն է՝

- պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «Ֆրիներջի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում «Ֆրիներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**